Բարև՛, սիրելի՛ Մերի,

Ես Ֆիրան եմ, սա իմ անվան կրճատ ձևն է: Ոգևորությամբ սպասում էի նամակիդ և նույն ոգևորությամբ էլ կարդացել եմ այն: Ուրախ եմ, որ նույն զգացմունքներն ունենք: Այնքա՜ն ճիշտ արտահայտություններ ես օգտագործել, որ նամակդ ինձ վրա մեծ ազդեցություն է թողել: Անհավատալի զգացողություն ունեմ, քանի որ գիտեմ՝ կարդալու ես խոսքերս: Եղբորդ հետ կապված վախերդ ու անհանգստություններդ ես էլ եմ ապրում: Այնքան իրավացի ես, քանի որ իմ հայրն էլ է զինվորական, շուտով նաև եղբայրս է բանակ զորակոչվելու. լավ չէ, որ զինծառայությունը պարտադիր է: Ճիշտ է, սահմանամերձ գոտում չեմ ապրում, բայց այնտեղ տեղի ունեցող ամեն բան միշտ անհանգստացնում է ինձ, և սա առաջին դժվար քայլն է, որը ես անում եմ: Խաղաղության վերաբերյալ մեր մտքերը միմյանց շատ նման են, և դա շատ ուրախալի փաստ է ինձ համար: Ինչպես դու ես նշել. «Մենք մեղավոր չենք մեր նախնիների արարքների համար»:

Գուցե մենք մեզ հրամցված «իրականությանից» զատ ոչինչ չգիտենք: Ինչ էլ լինի, արդյունքում ամեն բան նորից մարդկային կյանքի գնով է լինում: Մինչ այժմ տեղի ունեցածները ոչ մի կողմին չի գոհացրել, սակայն համատեղ ապագայի համար մենք կարող ենք ինչ–որ բան անել և դա կլինի իրական հայրենասիրություն: Թեև ասում են, որ պատերազմ չկա և ամեն ինչ լավ է, սակայն դեռ մեր սիրելիները, հայրենակիցները զոհվում են: Հույս ունեմ, որ համապատասխան անձինք առանց պատերազմի, առանց կորուստների և զենքի համատեղ որոշման կհանգեն: Գիտեմ, թե որքան հարազատ ժողովուրդներ ենք եղել պատմության ընթացքում, սակայն պատերազմից տարիներ են անցել, և առաջընթաց չունենք: Իսկ մեր հայրենակիցները հանուն ինչ–որ բաների փոխվում են: Ես միայն դրա համար եմ ցավում: Գիտե՞ս, ՄԵ՛ՐԻ, իմ երազանքը ճանապարհորդ դառնալն ու աշխարով մեկ շրջելն է: Դեռևս իմ երկրում եմ շրջագայում, բայց կուզենայի մի օր էլ Հայաստան գալ: Երբեմն Google Earth–ով նայում եմ Ղարաբաղը. ես արդեն ուզում եմ ծնողներիս պատմածների ու հուշերի փոխարեն ինքս տեսնել այդ ամենը: Հույս ունեմ, որ մի օր ես և դու կհանդիպենք որպես հարևաններ: Եվ այդ ժամանակ այս ճանապարհին միավորվելու համար հպարտանալու ենք այս նամակով: Առայժմ ցտեսություն եմ ասում, որովհետև եթե մենք կանք, նշանակում է հույս ևս կա...

Քո խաղաղասեր ընկեր՝

Ֆիրա